համար, իսկ վերջինս ժողովրդի, Ընկերութեանս նախագահն է Ռեթենքի Գերմանոս մետրոպոլիտն, իսկ փոխ նախագահն է Ռանգաբէն, որ այժմ առաջին յոյն գրագէտն է համարուած։

Գերմանոս եպիսկոպոսի ջանքերի շնորհիւ 1890 թուին կազմուեցաւ մի նոր քահանայական ընկերութիւն, որի նպատակն է նպաստել յոյն հոգևորականների զարգացման և նախապատրաստութեան։

Այս ընկերութիւնը հսկում է քահանայութեան թեկնածուների վերայ, հոգում է եկեղեցական երգեցողութեան, եկեղեցական պատկերագրութեան և առհասարակ եկեղեցու բարեզարդութեան մասին։

Այս երկու ընկերութիւնների համերաշխ գործունէութեան շնորհիւ հելլենական եկեղեցին նկատելի կերպիւ յառաջադիմում է։

Ահա մի գեղեցիկ օրինակ եկեղեցու վերածնութեան համար աշխատել ցանկացողներին։ Մեր մէջ ևս ցանկութիւն կայ բարձրացնելու եկեղեցականների կրթութեան աստիճանն ու եկեղեցու արտաքին բարեզարդութիւնը, աշխարհական և հոգևորական հրապարակագիրները առիթ չեն փախցնում բարձրագոչ աղաղակներով բողոքելու տգէտ քահանայութեան և եկեղեցական անբարեզարդութեան դէմ։ Թող օրինակ առնեն արդ և տեսնեն՝ թէ ուրիշ եկեղեցիք ի՞նչ ճանապարհներով են հասնում նոյնանման նպատակների։ Սակայն մենք դեռ խծբծելու և միմեանց մեղադրելու շրջանումն ենք, տայ Աստուած որ շուտով հասնէինք գործելու շրջանին։

---

3. ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

Նորադարձ օրթոդոքսներին առանձին հրճուանք է պատճառում իրենց մայրենի լեզուով կատարած ժամերգութիւնը, այդ մասին հաղորդում է ռուսաց «Եկեղեցական համբաւաբերը»։ Այսպէս Լատին ների լեզուով պատարագ է մատուցուել Վիտեբսկի եկեղեցում, ուր բազմութիւնն այնքան է եղել, որ շատերն եկեղեցում չեն կարողացել տեղ գտնել։ Նոյնպիսի արդիւնք է ունեցել և Կազանի թեմում։ Բայց Բայգբշին գիւղում չուաշերէն արած պատարագը։

—

Ռուսաց եկեղեցու թեմերում հետզհետէ հաստատուում են այսպէս կոչուած «գործակալների կամ բարեկարգիչների խորհուրդներ», որոնց պարտականութիւններն են.

ա. Քննել եկեղեցու միաբանների մէջ ծագած դժտութիւններն և ծխականների բողոքները իրենց քահանաների դէմ։

բ. Վկայութիւններ տալ եկեղեցու պաշտօնէից մասին։

գ. Իշխանութեան առաջարկել քահանաներին և պաշտօնեաներին պարգևատրել։

դ. Քննել քահանայական որբոց և այրեաց գործերը և սինոդին առաջարկել միանուագ նպաստներ նշանակելու։

ե. Քննել եկեղեցիների և եկեղեցական վերանորոգութեան համար տուած խնդրագիրը։

զ. Իրենց շրջանում ընկերութիւններ հիմնել ծխական գրադարաններ բանալու և առհասարակ եկեղեցու բարեզարդութեան մասին հոգալ։

Քաղաքային նոր օրինագրքով իրաւունք է տրուած քաղաքային վարչութիւններին հոգալու եկեղեցիների բարեզարդութեան մասին։ Օդեսսա քաղաքը, որի բնակիչների մեծ մասն օտարազգի և օտարադաւան են, մեծամեծ գումարներ է յատկացրել ռուս եկեղեցու բարեզարդութեան համար։ Խարկով, Կիև, Կազան և այլ քաղաքների խորհուրդները գրամական նպաստներ են տալիս մայր եկեղեցիներում երգեցիկ խմբեր պահելու համար։

—

Պետերբուրգից հեռագիրն հաղորդում է, որ բարձրագոյն հրաման է արձակուած արքունի գանձարանից 700,000 ռուբլի յատկացնել ի նպաստ ռուսաց սինոդի իրաւասութեան տակ գտնուող բոլոր դպրոցների։

—

ՄԵՏԵՆԱԼՈՅԱԿԱՆ

Անցեալ տարուայ վերջին լոյս է տեսել յայտնի հայագէտ Պրոֆ. Ֆ. Կոնիբերի մի նոր գրուածքը։ The Apology and Acts of Apollonius and other Monuments of Early Christianity. London, 1894. (Ապաստանութիւն և վկայաբանութիւն Ապողոնիոսի)։ Այս գեղեցիկ գործը պարունակում է 12 հին յիշատակարանների թարգմանութիւն հայերէնից և նուիրուած է Մայր Աթոռիս միաբան դպիր Գալուստ Տէր Մկրտչեանցին։ Կաշխատենք յաջորդ համարում գրքի բովանդակութեան հետ ծանօթացնել մեր ընթերցողներին։ Ն. Ֆ.